ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57»

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի **Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար լաբորատոր սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ տրամադրված պարզաբանումները.

Հարցադրում N 1 «Հարգելի՛ գործընկեր, խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը՝ 1…Հրավերի տեխնիկական բնութագրի 39-րդ չափաբաժնի առաջին ենթակետով պահանջվում է "Մեկ հատ ռոտացիոն գոլորշացուցիչ վակուումային պոմպով": Ցանկանում ենք տեղեկացնել, որ Ռոտացիոն գոլորշացուցիչն իր լրակազմում արդեն իսկ ներառում է նշված բնութագրերով վակուումային պոմպ: Խնդրում ենք հաստատել, որ պահանջվում է ընդհանուր հաշվով 1 միավոր պոմպ, որը ներառված է Գոլորշացուցիչի լրակազմում: 2… 39-րդ չափաբաժնի բոլոր ենթակետերի համար տեխնիկական բնութագրում նշված են պահանջվող քանակներ, բացառությամբ 4-րդ ենթակետի (Լաբորատորային խառնիչ): Կարելի՞ է ընդունել, որ պահանջվում է մեկ միավոր լաբորատոր խառնիչ»

Պարզաբանում N 1 «Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ, որ կատարվում է հրավերի փոփոխություն»:

Հարցադրում N 2 «Բարև ձեզ: Հարգելի պատվիրատու, մեր կարծիքով 6-րդ չափաբաժնով պահանջվող լազերային փորագրիչի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ: Պահանջվում է "Լազերի հզորություն և աղբյուր՝ 1064նմ 20Վտ դիոդային լազեր և 455նմ 20Վտ օպտիկամանրաթելային լազեր:" Բայց իրականում 1064 նմ օպտիկամանրաթելային լազերի համար է իսկ 455 նմ դիոդային: նշված է նաև "Մանրաթելային լազերը նախատեսված է ավելի կարծր նյութերի (մետաղի և ապակու) վրա փորագրելու և գծանշելու համար: Դիոդային լազերը նախատեսված է տարբեր ոչ մետաղական նյութերի վրա փորագրելու և կտրելու համար՝ փայտ, ակրիլ, կաշի և ստվարաթուղթ:" Իրականում Մանրաթելային լազերը նախատեսված է մետաղի և պլաստիկի մշակման համար, իսկ ապակու, փայտի ստվարաթղթի և մյուս ձեր կողմից նշված նյութերի մշակման համար նախատեսված է դիոդային լազերը: Ուստի խնդրում ենք եվս մեկ անգամ ստուգել Ձեր տեխնիկական պահանջները և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ»

Պարզաբանում N 2 «Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ, որ կատարվում է հրավերի փոփոխություն»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Այվազյանին:

Հեռախոս՝ 060 710 009:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@ysu.am: